ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՍԻ

ԷԹՆԻԿ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

Է.00.04. - «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2020

**ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

БАРСЕГЯН СЮЗАННА СОСЕВНА

РОЛЬ ЭТНИЧЕСКОЙ ПРЕССЫ В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ (ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

АВТОРЕФЕРАТ

**диссертация на соискание ученой
степени кандидата исторических наук
по специальности 07.00.04 “Этнография”**

ЕРЕВАН-2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. ***Ռ. Ս. Կարապետյան***
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ. ***Մ. Վ. Գալստյան***
պ. գ. թ. ***Ռ. Ս. Օհանջանյան***
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. մարտի 5-ին, ժամը 13:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 Հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2020 թ. հունվարի 24-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Պատմական գիտ. թեկնածու՝ ***Ա. Է. Հարությունյան***

Тема диссертации утверждена на заседании ученого совета Института археологии и этнографии НАН РА.

Научный руководитель: доктор ист. наук ***Р. С. Карапетян***
Официальные оппоненты: доктор ист. наук ***М. В. Галстян***
кандидат ист. наук ***Р. С. Оганджанян***
Ведущая организация: Институт истории НАН РА

Защита состоится 5-го марта 2020 г. в 13:00 часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца, 15).
Диссертацию можно найти в библиотеке Института археологии и этнографии НАН РА.
Автореферат разослан 24-го января 2020 г.
Ученый секретарь специализированного совета,

Кандидат истарических наук ***А. Э. Арутюнян***

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աշխարհում աճող միգրացիոն հոսքերը, գլոբալացման գործընթացները և սոցիալական փոփոխություններն անհրաժեշտ են դարձնում էթնիկ խմբերի էթնոմշակութային սահմանների հիմնախնդրի ուսումնասիրությունը: Ներկայումս մեդիան լավագույնս արտացոլում է այդ գործընթացը, ինչպես նաև, որպես պատկերացումների, դիրքորոշումների ու հանրային կարծիքի ձևավորման գործիք՝ կիրառվում է էթնիկ կամ ռասայական ներկայացվածության նպատակով: Սակայն, հիմնական լրատվամիջոցների համընդհանուր հաղորդագրությունների մեջ էթնիկ խմբերի ներկայացվածության ծավալը և բովանդակությունը հաճախ պայմանավորված են ընդունող երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային ուղենիշերով, չեն արտահայտում էթնիկ խմբի իրական շահերը, կանխամտածված էթնոմշակութային սահմաններ են գծում ընդունող հասարակության պատկերացումներում և չեն ստեղծում բավարար հաղորդակցական միջավայր: Վերջինիս ընդլայնմանը նպաստում են էթնիկ խմբերի համար և նրանց կողմից ստեղծված մեդիա կազմակերպությունները:

Սեփական մեդիա տարածության անհրաժեշտությունն ավելի բնորոշ է սփյուռքին, որն ունի կայուն համայնքներ ու ինստիտուտներ և գործադրում է ջանքեր՝ էթնոմշակութային ինքնության պահպանման ու վերարտադրման համար: Որպես դասական սփյուռք՝ տարաշխարհիկ հայությունն ունի էթնոսի կյանքն օտար միջավայրում կարգավորելու և էթնոմշակութային ինքնությունը պահպանելու ավանդական համայնքային ինստիտուտներ: Դրանց շարքում հատուկ տեղ ունի մամուլը, որի ստեղծումը մշտապես ուղեկցել է հայկական սփյուռքի տարբեր համայնքների ձևավորման պատմությանը: Աշխարհի տարբեր երկրների գաղթօջախներն ավանդաբար ստեղծել են հայկական մամուլ, ինչը վկայել է համայնքի կազմավորման և կարողությունների զարգացման նոր մակարդակի մասին: Այն ոչ միայն նպաստել է էթնոմշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանը, այլև նշանակալի դեր է կատարել ներգաղթյալների ամենօրյա կյանքում, էթնիկ համայնքի միավորման, ինքնակազմակերպման և տվյալ երկրում նրա դերի կարևորման գործում, տարածել է համազգային գաղափարներ, հանդիսացել է հասարակական-քաղաքական մտքի զարգացման հարթակ և այլն: Այժմ սփյուռքում տեղի ունեցող փոփոխությունները, ավանդական ինստիտուտների դերի նվազումը վերարժևորում են էթնիկ մեդիայի դերակատարությունը և անհրաժեշտ դարձնում դրա ուսումնասիրությունը: Էթնիկ մեդիայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ էթնիկ խմբերին, նրանց մշակութային, սոցիալական և քաղաքական առանձնահատկություն-

ները, ինչը հնարավոր չէ պարզել հիմնական լրատվամիջոցների դիտարկմամբ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է երեք հիմնական հանգամանքներով: Առաջին, համարվելով էթնոմշակութային ու սփյուռքյան ինքնության ձևավորման, էթնիկ տարածության սահմանման գործում և համայնքային գործընթացներում մեծ դերակատարություն ունեցող ինստիտուտ, կարևոր է բացահայտել էթնիկ մեդիայի դերը արդի հայկական սփյուռքում: Երկրորդ, ուսումնասիրությունը դիտարկում է էթնիկ մեդիան ոչ թե ընդունող երկրի էթնիկ փոքրամասնությունների, այլ սփյուռքի տեսանկյունից (համայնքների համեմատությամբ), ինչը հնարավորություն է տալիս դիտարկել սփյուռքի անդրազգային բնույթը: Եվ երրորդ, սփյուռքում տեղի ունեցող արդի գործընթացներն առաջացնում են համայնքային կազմակերպման նոր ձևեր, որոնց ուսումնասիրության համար պահանջվում են նոր մոտեցումներ:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել և պարզել էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում (Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի համայնքների օրինակով): Հետազոտության առարկան էթնիկ ինքնության կառուցակցման և համայնքային կյանքում մեդիայի դերն է: Ուսումնասիրության օբյեկտը ընտրված հայկական համայնքների երեք պարբերականներ են: Նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Քննարկել էթնիկ մեդիայի ուսումնասիրման հայեցակարգային մոտեցումները.
- Համակարգել և վերլուծել էթնիկ մեդիայի գործառույթների տեսական մոտեցումները.
- Պարզել էթնիկ մեդիայի և էթնիկ ինքնության հայեցակարգերի փոխհարաբերության բնույթը.
- Դիտարկել հայկական սփյուռքի մամուլի տեղը էթնիկ մեդիայի հայեցակարգի համատեքստում.
- Տալ արդի շրջանի հայկական սփուռքի մամուլի բովանդակության ընդհանուր և համեմատական նկարագիրը՝ երեք համայնքների (Մոսկվա, Թեհրան, Լոս Անջելես) պարբերականների օրինակով.
- Բացահայտել էթնիկ մամուլի գործառույթների առանձնահատկությունները հայկական համայնքներում.
- Վերլուծել հայրենիք-սփյուռք հարաբերությունների բնույթը մամուլում.
- Դիտարկել հայկական մամուլի դերը էթնիկ սահմանների պահպանման գործում.

Ատենախոսության աղբյուրագիտական և իրավանորմատիվային հիմքը: Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են հեղինակի կողմից

2011-2012 թթ. իրականացրած ուսումնասիրության տվյալները: Կիրառական էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է հայկական սփյուռքի երեք թերթերի՝ «Ноев Ковчег» (Մոսկվա), «Ալիք» (Թեհրան) և «Ասպարեզ» (Լոս Անջելես) 2005-2010 թթ. համարների բովանդակության վերլուծության միջոցով՝ օգտվելով Հայաստանի ազգային գրադարանի, ինչպես նաև թերթերի էլեկտրոնային արխիվներից: Հետազոտությունն իրականացվել է «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի շրջանակներում, Ռ. Կարապետյանի ղեկավարությամբ: Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև այլ առկա ուսումնասիրությունների երկրորդային տվյալներ:

Ատենախոսության մեթոդական հիմքը: Հետազոտության համար արդյունավետ է համարվել միջգիտակարգային մոտեցումը (էթնոսոցիոլոգիա, սոցիալական, մշակութային և մեդիա մարդաբանություն, սփյուռքագիտություն, զանգվածային հաղորդակցության տեսություն, էթնիկության տեսություն), ինչն ապահովում է վերլուծության համակողմանիությունը: Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքում ընկած են նշյալ գիտակարգերի ու գիտաճյուղերի հայեցակարգային մոտեցումները, որոնք ենթարկվել են համեմատական վերլուծության: Կիրառական էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է բովանդակության վերլուծության մեթոդով, մեդիայի ուսումնասիրման քննադատական ավանդույթի շրջանակներում:

Բովանդակության վերլուծություն մեթոդով մամուլի ուսումնասիրությունն իրականացվել է բազմափուլ՝ համայնքի, մամուլի, տեղեկատվության ծավալի և ուսումնասիրության միավորների ընտրությամբ: Նախ, համեմատական ուսումնասիրության համար մի շարք ցուցիչներով ընտրվել են սփյուռքի համայնքներ, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել ընդհանրությունները և տարբերությունները: Ապա առանձնացվել է մամուլի ուսումնասիրության արդի փուլ: Նախնական ուսումնասիրության արդյունքում այդ համայնքներում ընտրվել է մեկական տպագիր մամուլ: Հարկ է նշել, որ թերթի ընտրության չափորոշիչները, ունենալով ընդհանուր սկզբունքներ, տարբեր են համայնքներից յուրաքանչյուրի համար, ինչը թելադրվում է նրանց առանձնահատկություններով: Ընտրված երեք պարբերականների տեքստերի վերլուծության համար առանձնացվել են երկու տասնյակից ավելի ցուցիչներ: Տեղեկատվության աղբյուրի գլխավոր համախմբություն հանդիսացող երեք թերթերի վեց տարիների համարներից կատարվել է քվոտային ներկայացուցչական ընտրանք: Որպես տեղեկատվության

միավորներ են ընտրվել պատկերը, բառը, նախադասությունը, իմաստը, թեման, հիմնահարցը:

Այսպիսով, ուսումնասիրության համար ընտրվել է երեք հայկական համայնքների մեկական թերթ՝ «Ноев Ковчег» (Մոսկվա), «Ալիք» (Թեհրան) և «Ասպարեզ» (Լոս Անջելես): Վերլուծության են ենթարկվել երեք պարբերականների վեց տարվա՝ 2005-2010 թթ. հրապարակումները: Ընտրանքային համախմբությունը կազմել է թերթերի 312 համար: Ընդհանուր առմամբ վերլուծվել է 4635 հոդված: Իրականացվել է տվյալների վիճակագրական (SPSS վիճակագրական փաթեթի օգնությամբ), նկարագրական և համեմատական վերլուծություն: Իրականացվել է տվյալների խմբավորում և տիպաբանում, գծապատկերների նկարագրություն, կապերի և գործոնային վերլուծություն:

Ատենախոսության տեսական մոտեցումները: Էթնիկ խմբերի և մեդիայի փոխհարաբերության հիմնահարցն առավելապես հետազոտվել է հիմնական մեդիայում էթնիկ փոքրամասնության ներկայացվածության համատեքստում: Ավելի փոքրաթիվ հետազոտություններ կան էթնիկ մեդիայի և էթնիկ ինքնության փոխհարաբերության վերաբերյալ: Նման հետազոտությունները հիմնականում իրականացվել են քննադատական և մշակութային ավանդույթներում: Հիմնահարցի ուսումնասիրությունները հիմնականում ուղղված են հասկանալու՝ ինչպես է ազդում էթնիկ մեդիան ինքնության կառուցակցման վրա: Իրականացված հետազոտությունները գլխավորապես պատասխանում են այն հարցին, թե արդյոք էթնիկ մեդիայի օգտագործումը ռեսուրս է բազմակարծության և էթնիկ համայնքի ուժեղացման համար կամ արդյոք էթնիկ մեդիան ասիմիլյացնում է էթնիկ խմբին ընդունող հիմնական հասարակության մեջ: ԱՄՆ-ում եվրոպական էթնիկ մամուլի մասին Ռ. Պարկի մեթոդական հիմնարար ուսումնասիրությունից (1922 թ.) ի վեր պլյուրալիզմ-ասիմիլյացիա պարադիգմի հետազոտությունը գերիշխող է: Պարկը դիտարկել է էթնիկ մամուլի մի շարք կողմեր պլյուրալիզմ-ասիմիլյացիա գործառույթների երկվության համատեքստում և եզրակացրել, որ էթնիկ մամուլի օգտագործման առաջնահերթ արդյունքն ասիմիլյացումն է, չնայած նրան, որ առանձնացրել է նաև պլյուրալիզմին նպաստող մի շարք գործառույթներ ևս: Լ. Լամը նույնպես փաստում է, որ էթնիկ մեդիան հիմնականում խաղում է ասիմիլյացնող դեր՝ համոզելով էթնիկ համայնքին իրենց ընտրության մեջ և տալով տեղեկատվություն նոր միջավայրում հարմարման համար: Ֆ. Սաբերվի-Վելեզը, սակայն, էթնիկ մեդիային վերագրում է միաժամանակ և՛ պլյուրալիստիկ, և՛ ասիմիլյացնող դեր: Էթնիկ մեդիայի՝ պլյուրալիզմին նպաստող դերի մասին է խոսում Մ. Ջոնսոնը: Ըստ նրա,

էթնիկ ամսագրերը ամրապնդում են էթնիկ ինքնությունը՝ տալով ինքնության սիմվոլներ, ձևավորելով համայնք և փոխանցելով էթնիկ հպարտություն, իրականացնելով էթնիկ մշակույթի տրանսմիսիա: Ս. Ռիգինսը, Ք. Վիսվանաթը և Փ. Արորան նույնպես համարում են էթնիկ մեդիան որպես ինքնության ձևավորման կարևոր դաշտ, քանի որ այն կենտրոնանում է էթնիկ համայնքի դրական կողմերի վրա, ինչին ուշադրություն չեն դարձնում հիմնական ԶԼՄ-ը, օգնում է պայքարել էթնիկ փոքրամասնության բացասական պատկերը ներկայացնող հիմնական լրատվամիջոցների գաղափարների դեմ, մատուցում է լուրեր հայրենիքի ու համայնքի մասին, կարևոր դեր է խաղում էթնիկ համայնքի պահպանման և գործունեության մեջ, հաստատում է էթնիկ խմբի տեղը գերիշխող հասարակության մեջ: Հաջորդ կարևոր ուղղությունն էթնիկ ինքնության և մշակույթի վրա էթնիկ մեդիայի ազդեցության ուսումնասիրումն է: Լ. Ջեֆրեսը պարզել է, որ էթնիկ մեդիան օգնում է պահպանել կապն էթնիկ մշակույթի հետ և այն կարևոր դեր է խաղում էթնիկ ինքնության պահպանման գործում: Դ. Ռիոսը, Վ. Բարերան և Դ. Բիելբին համոզմունք են հայտնում, որ էթնիկ մեդիան լեգիտիմացնում է էթնիկ խմբի առնչություններն իրենց մշակութային ժառանգության հետ, ինչը մարգինալացված է զանգվածային մեդիա շուկայում: Վ. Մայերը, դիտարկելով էթնիկ մեդիայի սպառման առօրեականությունը, նշել է, որ այն ամրապնդում է մշակութային կապը, սակայն առանձնահատուկ ազդեցություն չի թողնում էթնիկ ինքնության վրա: Մ. Ջեորջյուն, ուսումնասիրելով Եվրոպայի սփյուռքների մեդիան, համարում է, որ սփյուռքյան մեդիա մշակույթը արդիական է դարձնում ունիվերսալիզմ-պարտիկուլյարիզմ հակադրությունը: Նա գտնում է, որ էթնիկ մեդիան ամրապնդում է ինքնությունը և պատկանելության զգացումը:

Էթնիկ խմբերի և մեդիայի վերաբերյալ ուսումնասիրությունները հետխորհրդային, ռուսական գիտական ավանդույթի մեջ առավելապես ուղղված են հիմնական մեդիայում էթնիկ փոքրամասնությունների ներկայացվածությանը: Բուն էթնիկ մեդիայի ուսումնասիրությունները բավականին փոքրաթիվ են: Այդ հիմնահարցին անդրադարձել են Վ. Մալկովան, Ե. Գիբովան, Յու. Կրավչենկոն, Ե. Աբրոսիմովան և այլք:

Համարվելով աշխարհի դասական սփյուռքներից մեկը և ունենալով մամուլի հարյուրամյակների պատմություն, այդուհանդերձ, հայկական սփյուռքի մեդիան դեռևս բավարար ուսումնասիրված չէ էթնիկ մեդիայի հայեցակարգի շրջանակներում՝ ո՛չ արտասահմանյան, ո՛չ հայաստանցի հետազոտողների

կողմից: Ինչպես նաև, ընդհանուր առմամբ, բավարար ուսումնասիրված չէ արդի շրջանի սփյուռքի մեդիան:

Հարկ է նշել, որ բավականին համակողմանի ուսումնասիրվել են 19-20-րդ դարի հայ մամուլի պատմությունը, բովանդակությունը և նշանակությունը, մշակվել են պարբերական մամուլի մի շարք նշանակալի մատենագիտական աշխատություններ, ինչպես նաև ստեղծվել են հայ մամուլի թվայնացված համակարգեր: Հայ մամուլի պատմագիտական ուսումնասիրությունների հիմնարար աշխատությունների հեղինակներ են՝ Ա. Խառատյանը, Մ. Մխիթարյանը, Գր. Գալէմքեարեանը, Լ. Գևորգյանը, Գ. Զարբհանալեանը, Գ. Լևոնյանը, Լ. Խաչատրյանը, Մ. Հակոբյանը, Լ. Ալոյանը, Գ. Անանյանը, Ա. Արշարունին, Վ. Ղուկասյանը, Է. Բաղդասարյանը և այլք:

Ատենախոսության գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը: Սփյուռքի հայկական մամուլի ուսումնասիրության համար ցուցաբերվել է նոր մոտեցում: Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում՝ ա) ուսումնասիրել հայկական մամուլն էթնիկ մեդայի հայեցակարգի շրջանակներում, բ) դիտարկել հայկական սփյուռքի մամուլը՝ որպես առանձին դեպքի ուսումնասիրություն (այլ էթնիկ/սփյուռքյան խմբերի մեդիայի հետ համեմատությունից դուրս) գ) իրականացնել ներսփյուռքյան համադրական վերլուծություն (համեմատելով տարբեր երկրներում երեք համայնքների մամուլը), դ) հետազոտությունն իրականացնել բովանդակության վերլուծության մեթոդով:

Հետազոտության արդյունքները կարևոր են թե՛ մեթոդաբանության կիրառման փորձի, թե՛ թեմայի շրջանակներում տեսական գիտելիքների ու ակադեմիական հետազոտության իրագործման փորձի և թե՛ կիրառական նշանակության տեսանկյունից: Այսպես, հայկական սփյուռքի մամուլի ուսումնասիրումն էթնիկ մեդիայի հայեցակարգի համատեքստում կարող է ունենալ գիտական նշանակություն էթնոսոցիոլոգիայի, մշակութային և մեդիա մարդաբանության սփյուռքագիտության, զանգվածային հաղորդակցության տեսությունների և այլ գիտակարգերի համար: Հետազոտությունը հնարավորություն կտա համեմատել հայկական սփյուռքի մամուլն այլ սփյուռքների մեդիա բովանդակության և գործառույթների հետ, ինչպես նաև հայկական սփյուռքի այլ համայնքների մամուլի հետ: Տեսամեթոդաբանական նման մոտեցումը կարող է հիմք հանդիսանալ այս ուղղությամբ հետագա ուսումնասիրությունների համար:

Բացի գիտական արդյունքից, սփյուռքյան մամուլի ուսումնասիրությունն ունի գործնական նշանակություն. հետազոտության արդյունքները կարող են կիրառվել սփյուռքի քաղաքականության և մեդիա քաղաքականության մշակման, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների զարգացման, մամուլի մի-

ջոցով սփյուռքի տարբեր համայնքներում կառույցների գործառնման, համայնքի կարողությունների զարգացման և էթնոմշակութային ինքնության պահպանմանն ուղղված աշխատանքների գործում: Բացի դրանից, հիմնվելով տարբեր համայնքների համեմատական ուսումնասիրության արդյունքների վրա, կարելի է մշակել և իրագործել անդրազգային հայկական մեդիայի գաղափարներ:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի և Էթնոսոցիոլոգիայի բաժնի համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են տաս գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել Հայաստանի և արտասահմանյան հրատարակություններում: Ատենախոսության մեջ քննարկվող հայեցակետերն ու հարցադրումները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվել է հիմնահարցի ուսումնասիրման կարևորությունն ու արդիականությունը, շարադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, շեշտադրվել է աշխատանքի գիտական նորարարությունը, ցույց է տրվել նրա տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև ներկայացվել է աշխատանքի մեթոդական ու մեթոդաբանական հիմքը և գիտական աղբյուրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԷԹՆԻԿ ՄԵԴԻԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1.1. «Էթնիկ մեդիա» հասկացությունը և հիմնական գործառույթները: Էթնիկ մեդիայի վերաբերյալ օգտագործվող եզրույթների նախընտրությունը հաճախ պայմանավորված է տարբեր երկրների պետական քաղաքականության մեջ կամ գիտական շրջանակներում մարդկանց էթնիկ կամ ռասայական ծագմամբ պայմանավորված տարբերությունների ընկալումներով: Գրականության մեջ օգտագործվում է փոքրամասնության, ներգաղ-

թյալների կամ միգրանտների, համայնքային, սփյուռքյան և էթնիկ մեդիա երզրոյթները: Սակայն էթնիկ մեդիա հասկացությունն ամենակիրառելին և համընդգրկունն է: Ինչպես ձևակերպում են Մ. Մաթսագանիսը և մյուսները, «էթնիկ մեդիան լրատվամիջոց է, որն արտադրվում է տարբեր երկրներում բնակվող ներգաղթյալների, ռասայական, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունների, ինչպես նաև տեղաբնիկների համար և նրանց կողմից»[1]:

Հետազոտողները առանձնացնում են էթնիկ մեդիայի մի շարք հիմնական գործառույթներ: Առաջինն ինքնին մեդիայի անհրաժեշտությունն է՝ արտահայտելու էթնիկ փոքրամասնության տեսակետը, արժեքներն ու մշակույթը, ամրացնելու ընդունող երկրում նրա ներկայացվածությունն ու քաղաքական ազդեցությունը: Սփյուռքի պարագայում, տեղային, ազգային ու անդրազգային մեդիան ձևավորում է տարածական համատեքստ, որտեղ սփյուռքի համայնքները կամ խմբերը ապրում և պատկերացնում են իրենց սփյուռքյան տարածությունը: Դիտարկելով էթնիկ մեդիայի գործառույթները մեդիա բովանդակության տեսանկյունից, առանձնացնում են երեք հիմնական գործառույթ՝ միավորող (կապ հայրենիքի հետ), կողմնորոշող (ինտեգրում ընդունող հասարակությունում), խորհրդանշական (արժեքների, գաղափարների տարածում): Սակայն էթնիկ մեդիայի կարևորագույն դերը էթնիկ և մշակութային ինքնության պահպանումն ու ձևավորումն է: Հետևաբար, էթնիկ մեդիայի հայեցակարգը սերտորեն կապված է էթնիկ ինքնության հայեցակարգի հետ:

1.2. Էթնիկ մեդիան և ինքնության կառուցակցման հիմնախնդիրները: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, էթնիկ ինքնության երեք փոխկապակցված բաղադրիչներից՝ իմացական, վարքային և զգայական, էթնիկ մեդիան առավել մեծ ազդեցություն ունի վերջին բաղադրիչի վրա՝ ամրապնդելու պատկանելության զգացումը: Էթնիկ սոցիալականացման և ինքնության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ՝ ընտանիքը, էթնիկ հարևանությունը, ընկերությունը (միջավայրը), լեզվի տիրապետումը, սեռը և այլն: Տեղային էթնիկ միջավայրերն իրենց հերթին ստեղծում են պատումների ցանց, որի հիմնական աղբյուրներն են համայնքի անդամները, համայնքային կազմակերպությունները և էթնիկ մեդիան:

Էթնիկ մեդիայի և էթնիկ ինքնության փոխկապվածության հիմնահարցի վերաբերյալ տեսական մոտեցումները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էթնիկ մեդիայի բովանդակությունը երկակի է՝ և՛ ասիմիլյացնող, և՛ պլյուրալիստիկ: Պլյուրալիզմը էթնիկ մեդիայում նպաստում է էթնիկ մշա-

[1] M. Matsaganis, V. Katz, S. Ball-Rokeach, Understanding Ethnic Media: Producers, Consumers, and Societies, SAGE Publications, Inc., Los Angeles; London; New Delhi, 2011, p. 10.

կոյթի և ինքնության պահպանմանն ու փոխանցմանը: Այն նաև տրամադրում է սիմվոլներ և դերային մոդելներ, ամրապնդում էթնիկ հպարտության զգացումը:

Էթնիկ համայնքի կողմից մեդիայի սպառումը փոփոխում է անհատական ինքնությունները, ներազդում է համայնքի ձևավորման և, ի վերջո, կոլեկտիվ գործողության վրա: Ինքնությունը ձևավորվում է մեդիայում՝ որպես իրադարձությունների պատմման դիսկուրսիվ արդյունք: Մեդիան տրամադրում է ինքնության կետեր՝ նշելով սիմվոլիկ սահմանները, կամրջում է ցրիվ սուբյեկտներին «երևակայական համայնքի» մեջ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԷԹՆԻԿ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ՄՈՍԿՎԱՅԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ԹԵՐԹԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

2.1. Հայկական սփյուռքի մամուլն «էթնիկ մեդիա» հասկացության համատեքստում: Էթնիկ մեդիայի համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած ընդհանրություններին, գոյություն ունեն տարբեր էթնիկ խմբերի՝ էթնիկ մեդիա ստեղծելու, զարգացնելու, մեդիա բովանդակության և սպառման առանձնահատկություններ: Դրանք կախված են թե՛ էթնիկությունից, թե՛ էթնիկ փոքրամասնության խմբի ձևից և թե՛ ընդունող երկրի յուրահատկություններից: Սփյուռքյան համայնքների համար էթնիկ մեդիայի դերն առավել նշանակալի է, քանի որ այդ էթնիկ խմբերը ստեղծում են ինստիտուտներ և ջանքեր են գործադրում էթնիկության պահպանման համար: Նրանց հատուկ է, այսպես կոչված, սփյուռքյան ինքնությունը: Ինքնության պահպանման համար սփյուռքի համայնքները փորձում են գտնել ինքնակազմակերպման տարբեր ձևեր և ձևավորել ինստիտուտներ: Հատկանշական է, որ հայկական գրեթե բոլոր համայնքների ձևավորման պատմությունը մշտապես ուղեկցվել է մամուլի ստեղծմամբ: Այն ավանդական համայնքային կառույցներից է: Ելնելով այս հանգամանքից, ինչպես նաև մամուլի մի շարք առանձնահատկություններից, Ժամանակակից սփյուռքի մեդիա ուսումնասիրության համար մեդիայի տարատեսակ ձևերից ընտրվել է մամուլը:

Այսպիսով, հայկական սփյուռքի մամուլը լիովին կարող ենք դիտարկել «էթնիկ մեդիա» հայեցակարգի համատեքստում՝ օգտագործելով էթնիկ կամ սփյուռքյան մամուլ եզրույթը: Սակայն, էթնիկ մեդիայի հետազոտությունների՝ ասիմիլյացում-պլյուրալիզմ գերիշխող հայեցակարգը որոշակիորեն սահմանափակում է սփյուռքի մամուլի ուսումնասիրությունը՝ դիտարկելու սփյուռքի անդրազգային բնույթը և հիբրիդային ինքնությունը: Սփյուռքյան մեդիան

նպաստում է երևակայական պատկանելության տեղափոխությանը՝ ազգայինից դեպի անդրազգային տարածություն: Այն նշանակալի դեր է խաղում՝ ապահովելով «ամենօրյա վիրտուալ ճամփորդություն» և ամրապնդելով անդրազգային կապերը:

2.2. Թերթերի բովանդակության ընդհանուր և համեմատական վերլուծությունը: Էթնիկ մամուլի բովանդակությունը պայմանավորում է նրա գործառույթներն ու դերը ինքնության կառուցակցման գործում և համայնքային կյանքում: Չնայած ընդհանրություններին, տարբեր երկրներում լույս տեսնող պարբերականներն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են տվյալ երկրի ու համայնքի տարբերություններով: Հետևապես, հարկ է վերլուծել երեք համայնքների թերթերի՝ «Ասպարեզ» (Լոս Անջելես), «Ալիք» (Թեհրան) և «Ноев Ковчег» (Մոսկվա), բովանդակությունը՝ տալով ընդհանուր և համեմատական նկարագիրը, համասփյուռքյան ընդհանրություններն ու համայնքային առանձնահատկություններ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մամուլի բովանդակությունն առավելապես հայկական է, որն իր հերթին մեծապես վերաբերում է Հայաստանին: «Ասպարեզի» և «Ալիքի» նյութերի ընդհանուր ծավալի մեջ հայկական թեմաները կազմում են մեծամասնություն, իսկ «Ноев Ковчег»-ում՝ մոտ կեսը: Մամուլի հայկական տեղեկատվության մեծամասնությունն իր հերթին վերաբերում է Հայաստանին, ապա՝ տվյալ համայնքին կամ սփյուռքին, և ամենաքիչը՝ հայրենիք-սփյուռք հարաբերություններին: Հատկանշական է, որ որքան բարձր է տվյալ համայնքի ինքնակազմակերպման աստիճանը, այնքան մամուլում ավելի շատ նյութեր կան համայնքի մասին: Այս ցուցանիշով Մոսկվայի հայկական թերթը կրկնակի զիջում է Թեհրանի և Լոս Անջելեսի թերթերին: Ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս Հայաստան-սփյուռք շրջանակների նյութերի ծավալի և գնահատականի հակադարձ համեմատականություն. եթե ծավալի առումով գերիշխում է հայաստանյան տեղեկատվությունը, ապա դրական գնահատականով նյութերով՝ սփյուռքյան լրատվությունը: Հայկական թեմաների ճնշող մեծամասնությունը քաղաքական բնույթի է: Երկրորդ տեղում մշակութային թեման է, ապա՝ սոցիալ-տնտեսական, իրավական, ազգային և բարեգործական: Հայրենիքն առավելապես ներկայացվում է քաղաքական, իսկ սփյուռքը՝ մշակութային կողմով: Ընդ որում, սփյուռքի մամուլի ուշադրության կենտրոնում է ավելի շատ ՀՀ արտաքին, քան ներքին քաղաքականությունը: Թեմաների և գնահատականների պատկերը փոխվում է Հայաստանի, սփյուռքի և հայրենիք-սփյուռք կապի վերաբերյալ նյութերում:

Այսպիսով, մամուլի հայկական բովանդակության ծավալը, թեմատիկ առաջնահերթությունները, Հայաստան-սփյուռք կապի ուղղվածությունը, գնահատականները և ներկայացման ձևը ցույց են տալիս տարբեր համայնք-

ներում էթնիկ մեդիայի բովանդակության, գործառույթների և դերի տարբերություններ և ընդհանրություններ:

Մամուլի բովանդակության վերլուծությունը ոչ միայն արտահայտում է համայնքների կյանքը, սպասումները, խնդիրները, ներկայացնում է հայրենիքի մասին պատմություններ և սփյուռքի վերաբերմունքը, ցույց է տալիս մամուլի՝ որպես համայնքային կառույցի դերը, այլ նաև հնարավորություն է տալիս գնահատել բովանդակության ազդեցությունը, հասկանալ մամուլի հիմնական գործառույթները սփյուռքում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

3.1. Էթնիկ մամուլի գործառույթները հայկական համայնքներում: Հայկական տարբեր համայնքներում մամուլն ունի իր դերակատարման առանձնահատկությունները: Ակնհայտ են Մոսկվայի, Լոս Անջելեսի և Թեհրանի հայկական համայնքների ինքնակազմակերպման, ինտեգրման ու ազդեցիկության աստիճանների տարբերությունները, որոնք արտահայտված են նաև մամուլի միջոցով: Տարբեր են նաև համայնքների համար մամուլի՝ որպես սոցիալական ինստիտուտի կարևորությունը: Սակայն էթնիկ մամուլի գլխավոր գործառույթը սփյուռքյան ինքնության կառուցակցումն է: Այս հիմնական դերի տեսանկյունից, սփյուռքի երեք պարբերականների բովանդակության վերլուծությունը ցույց տվեց, որ հայկական մամուլն ակնհայտորեն շեշտադրում է միավորող գործառույթը՝ լուսաբանելով առավելապես հայկական տեղեկատվություն, կապելով էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնելով պահպանել ինքնությունը, մշակույթը և լեզուն: Կողմնորոշող գործառույթը, որով մամուլը օգնում է ինտեգրվել ընդունող երկրում՝ տարածելով տեղեկատվություն համայնքի և ընդունող հասարակության մասին, զիջում է միավորող գործառույթին:

3.2. Հայրենիք-սփյուռք հարաբերությունները հայկական մամուլում: Սփյուռքյան հիբրիդային ինքնության ձևավորման գործում մեծ դերակատարություն ունի էթնիկ մեդիան՝ տարածելով և վերարտադրելով էթնոմշակութային արժեքներ: Հայրենիք-սփյուռք կապի առանձնահատկությունները լավագույնս արտացոլվում է էթնիկ մեդիայում: Էթնիկ մեդիայի սպառումը սփյուռքին հնարավորություն է տալիս ապատարածականացնել հայրենիքը, նոր կարգավիճակ տալ հայրենիքի տարածքին: Մեդիայի միջոցով աշխարհագրորեն հեռու հայրենիքը կարող է ձևավորել և պահպանել սփյուռքյան ինքնությունը: Մեդիան առանցքային դեր է խաղում՝ ամրապնդելով սփյուռքի անդամների կապը հայրենիքի հետ, կապելով մշակույթն աշխարհագրական

տեղին: Այն վերարտադրում է հայրենիքի տարածքը և էթնոմշակութային պրակտիկան, որը էթնիկ խմբի հին և նոր անդամները կիրառում են թե՛ անձնական, թե՛ հանրային կյանքում: Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրը (հաճախ հայերեն լեզվով) մեդիայի միջոցով փոխանցվում է սփյուռքին: Նրանց կյանքը սփյուռքի տարբեր համայնքներում զուգահեռվում է Հայաստանի հետ: Մեդիայի միջոցով հայրենիքի և սփյուռքի միջև կտրված սահմանը կարծես վերանում է:

3.3. Սփյուռքի մամուլը որպես էթնիկ սահմանների պահպանման գործոն: Սփյուռքում էթնիկ և մշակութային ինքնանույնացումը և ինքնության պահպանմանն ուղղված ինստիտուտների ստեղծումն ունի առանցքային նշանակություն: Մամուլը, որպես դիսկուրսիվ տարածություն, սփյուռքի սահմանման կարևոր ինստիտուտ է: Մի կողմից, աշխարհով մեկ սփռված հայկական բազմազան ու բազմաշերտ սփյուռքում էթնոմշակութային ինքնության պահպանման վրա ներգործող ընդունող երկրների միջավայրի և համայնքային տեղական կառույցների առանձնահատկությունները կարող են դրսևորվել էթնիկ մեդիայում: Մյուս կողմից, մեդիա բովանդակությունը կարող է տարածել ընդհանուր էթնոմշակութային արժեքներ՝ այլազգի միջավայրերում գտնվող սփյուռքի տարբեր համայնքներին:

Մամուլում էթնիկության սահմանները ցույց տվող մշակութային տեղեկատվությունն իր ծավալով զբաղեցնում է երկրորդ տեղը, ընդ որում, սփյուռքի մասին նյութերի մեջ՝ առաջին տեղը: Սակայն սփյուռքի թերթերն ավելի շատ ներկայացնում են հայաստանյան, քան սփյուռքյան մշակույթը: Մի կողմից, մամուլի բովանդակությունը վկայում է հայկական մշակութային արժեքների ընդհանրության մասին, մյուս կողմից, այն մշակութային սահմաններ է գծում ոչ միայն այլ մշակույթների, այլև էթնոսի տարբեր հատվածների միջև:

Տարբեր համայնքներում գործող սփյուռքի մամուլը ստեղծում է էթնիկ ինքնության բանակցությունների դիսկուրսիվ դաշտ, մասնակցում է սփյուռքյան ինքնության ձևավորմանը, տալիս է սիմվոլներ և դիրքորոշումներ՝ էթնիկ սահմանների համար, ստեղծում է երևակայական համայնքի անդամության զգացում, ինչպես նաև նպաստում է սփյուռքի անդրազգային բնույթի ամրապնդմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայկական սփյուռքում մամուլի դերի ուսումնասիրությանն ուղղված աշխատանքը հնարավորություն է տալիս կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները.

• Սփյուռքի մամուլի հայկական բովանդակությունը ցույց է տալիս տվյալ համայնքի տեղեկատվական պահանջները, էթնիկ մամուլի ազդեցության աստիճանը, վկայում է համայնքի ինքնակազմակերպման մակարդակի մասին, ցույց է տալիս ընդունող երկրի հիմնական մեդիա դաշտում հայկական տեղեկատվության բացը լրացնելու, հայկական համայնքը ներկայացնելու և ինքնության պահպանմանն ուղղված սփյուռքի ջանքերը:

• Մամուլում հայկական թեմաներն ունեն ընդգրկման երեք մեծ շրջանակ՝ Հայաստան, սփյուռք և հայրենիք-սփյուռք, որոնք իրենց հերթին ունեն ներքին բաժանում: Թեմաների նման խմբավորումը հնարավորություն է տալիս ընկալել ընդհանուր՝ համահայկական և առանձնահատուկ՝ համայնքային հիմնախնդիրները: Սփյուռքի երեք համայնքների թերթերում գերակշռում են Հայաստանին վերաբերող թեմաները: Առանձին համայնքների և, ընդհանուր առմամբ, հայկական սփյուռքի վերաբերյալ տեղեկատվությունը զգալիորեն զիջում է հայաստանյան լրատվությանը: Բոլոր թերթերն ամենաքիչն անդրադարձել են հայրենիք-սփյուռք հարաբերություններին: Հատկանշական է, որ շատ ցուցանիշներով Լոս Անջելեսի և Թեհրանի հայկական մամուլն ունեն նմանություններ: Մոսկվայի պարբերականը խիստ տարբերվում է:

• Ուսումնասիրված երեք համայնքները ներկայացնող թերթերի վեց տարվա հրապարակումները ցույց են տալիս հակադարձ համեմատականություն Հայաստան-սփյուռք շրջանակների նյութերի ծավալի և գնահատականի միջև: Սփյուռքյան մամուլը, որքան շատ է ներկայացրել տեղեկատվություն Հայաստանի մասին, այնքան ավելի քիչ է դրական անդրադարձերը, և հակառակը՝ սփյուռքն ավելի շատ է ներկայացվել դրական լույսի ներքո:

• Ինչպես ցույց է տալիս բովանդակության վերլուծությունը, մամուլի հայկական տեղեկատվության մեծամասնությունն իրադարձային է: Ամենաշատ պատմական անդրադարձը վերաբերել է սփյուռքին, ապա՝ Հայաստանին: Իսկ հայրենիք-սփյուռք հարաբերությունները ներկայացվում են ավելի շատ ապագային միտված:

• Մամուլի բովանդակության տիպաբանությունն ըստ ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային (ներառյալ՝ հոգևոր, գիտակրթական, մարզական), բարեգործական, ազգային, ցույց է տալիս, որ հայկական թեմաների մեծամասնությունը քաղաքական բնույթի է բոլոր պարբերականներում: Երկրորդ տեղում մշակութային նյութերն են, ապա՝ սոցիալ-տնտեսական, իրավական, ազգային և բարեգործական: Հատկանշական է, որ բոլոր թեմաները, բացի սոցիալ-տնտեսականից, գրեթե հավասար համամասնություն ունեն երեք թերթերում: Սակայն, պատկերը փոխվում է, երբ նյութերն առանձնացնում ենք ըստ Հայաստան-սփյուռք

շրջանակների: Եթե Հայաստանն ավելի շատ ներկայացվում է քաղաքական, ապա սփյուռքը՝ մշակութային ոլորտի թեմաների համատեքստում: Հայրենիք-սփյուռք կապի համար Լոս Անջելեսի և Թեհրանի թերթերը կարևորում են մշակութային, սակայն Մոսկվայի հայկական պարբերականը՝ գլխավորապես քաղաքական ու տնտեսական բաղադրիչը:

• Առանձնացված յոթ ոլորտները մամուլի կողմից ներկայացվել են տարբեր գնահատականներով: Ըստ տվյալների՝ ամենադրականն են ներկայացվել բարեգործությունն ու մշակույթը, ամենաբացասականը՝ ազգային հարցերն ու քաղաքական թեմաներ:

• Սփյուռքի հայկական մամուլն ակնհայտորեն շեշտադրում է միավորող գործառույթը՝ լուսաբանելով առավելապես հայկական տեղեկատվություն, կապելով էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնելով պահպանել լեզուն և մշակույթը: Հայրենիքի և սփյուռքի վերաբերյալ մամուլի բովանդակություն, հետևաբար՝ մամուլի միավորող և կողմնորոշող գործառույթներն անհամաչափ են. տեղեկատվության ճնշող մեծամասնությունը հայաստանյան թեմաներ են: Մամուլի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս սփյուռքի հայերի կյանքի ամենօրյա առնչությունը Հայաստանի հետ: Համայնքների համեմատությունից պարզ է դառնում, որ որքան կայացած է տվյալ համայնքը, ունի կայացած ինստիտուտներ, ներքին համայնքային կյանք, այնքան ավելի շատ է քննարկում, կարևորում սեփական խնդիրները, որոնք տեղ են գտնում մամուլում:

• Երեք տարբեր համայնքների մամուլի բովանդակությունը ցույց է տալիս, որ էթնիկ մեդիայի միջոցով կարող է ստեղծվել անդրազգային հաղորդակցական ցանց հայրենիքի և սփյուռքի համայնքների միջև և ձևավորել ընդհանրական արժեքներ՝ իր լրումն տեղային առանձնահատկությունների: Այս առումով, հաշվի առնելով հայրենիք-սփյուռք առկա կապերը, ներկայիս ՏՀՏ միջոցները և մեդիայի հնարավորությունները, հայկական մեդիայի միջոցով հնարավոր է ստեղծել անդրազգային հաղորդակցական տարածություն, ցանց, և դրա հիման վրա ձևավորել որոշակիորեն ընդհանրական էթնոմշակութային արժեքներ:

• Հայրենիքի մասին տեղեկատվության գերակշռությունը, մի կողմից, վկայում է հայկական սփյուռքի ձգտումը՝ մշակութային երկատվածության իրավիճակում վերադառնալ արմատներին, մշակույթին, անցյալին: Մյուս կողմից, էթնիկ մեդիայի հայաստանակենտրոն բովանդակությունը սփյուռքյան փոփոխվող ինքնությունը փորձում է դարձնել առավել կայուն: Հայաստանը, փաստորեն, դառնում է սփյուռքի հայկական տեղեկատվական դաշտի այն միջուկը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժեքները վերարտադրվում ու տարածվում են համայնքներում՝ անկախ նրանց տարբերություններից:

• Սփյուռքի ժամանակակից մամուլն իր խորհրդանշական գործառույթը (արժեքների, գաղափարների տարածում, էթնիկ ինքնության պահպանում կամ ձևավորում) կատարում է քաղաքական թեմաների մատուցման շրջանակներում, ի լրումն մշակութային թեմաների: Էթնիկ արժեքների տարածման և ազգային ինքնության պահպանմանն է նպաստում նաև մամուլի բովանդակության մեջ պատմական հիշողության վերարտադրումը, ընդհանուր պատմության վերաիմաստավորումը:

• Չնայած հայկական սփյուռքի տարբեր հատվածների առանձնահատկություններին ու տարբերություններին՝ էթնիկ մեդիան ձևավորում է որոշակի էթնոմշակութային ընդհանրական արժեքներ: Սփյուռքի մամուլի բովանդակության մեջ խորհրդանշական տեղեկատվություն փոխանցելով ընդհանուր անցյալի մասին և սփյուռքին մասնակից դարձնելով հայրենիքում ընթացող ամենօրյա գործընթացներին՝ նպաստում է մշակութային ու էթնիկ միասնությանը: Էթնիկ մամուլը ստանձնում է որոշիչ դեր նրանց, այսպես կոչված, սփյուռքյան ինքնության կառուցակցման գործում:

• Ունենալով հայրենիքի մասին պատկերացումների տարբերություններ, ազգային պետության գոյությունը սփյուռքում ամրապնդում է «իրական հայրենիքի» գաղափարը: Սփյուռքը գիտակցում է Հայաստանի հետ կապի կարևորությունը՝ որպես իր գոյության և ազգային ինքնության պահպանման առանցքային գործոն: Մամուլի բովանդակությունն սփյուռքի ընկալումներում ամրապնդում է Հայաստանը՝ որպես հայրենիք և ազգային պետություն:

• Սփյուռքյան հիբրիդային ինքնության մեջ հայկականի ամրապնդման գործում մեծ դերակատարություն ունի էթնիկ մամուլը՝ տարածելով և վերարտադրելով էթնոմշակութային արժեքներ, կապելով հայրենիքի հետ, սփյուռքյան փոփոխվող ինքնությունը դարձնելով ավելի կայուն:

• Չնայած հայրենիքի մասին տեղեկատվության գերակայությանը, այն առավելապես ներկայացվում է չեզոք գնահատականներով և վերաբերմունքով: Նման ձևով հայրենիքի ներկայացումը կարող է սփյուռքահայերին փոխանցել Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրը, նրանց կյանքը սփյուռքի տարբեր համայնքներում զուգահեռել Հայաստանի հետ, վերացնել հայրենիքի և սփյուռքի կտրված սահմանը: Սակայն այն չի խրախուսում հայրենիքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում ակտիվ ներառվելու վարք, առավելապես՝ հայրենադարձություն:

• Սփյուռքի մամուլի բովանդակության մեջ խորհրդանշական տեղեկատվություն փոխանցելով ընդհանուր անցյալի ու բոլորի հայրենիքի մասին և սփյուռքին մասնակից դարձնելով հայրենիքում ընթացքող ամենօրյա գործընթացներին՝ ստեղծվում է մշակութային ու էթնիկ միասնություն: Մամուլը վերարտադրում է հայրենիքի տարածքը և էթնոմշակութային պրակտիկան: Այսպիսով, էթնիկ մամուլը, ներկայացնելով հայրենիքը, նպաս-

տում է ինքնության պահպանմանը, էթնոմշակութային արժեքների վերարտադրմանն ու տարածմանը, ամրապնդում է էթնիկ խմբին պատկանելության զգացումը:

• Էթնիկ մամուլը ինքնության բանակցությունների և էթնիկության սահմանների հաստատման համար անհրաժեշտ տարածություն է, որտեղ սփյուռքի ներկայացուցիչները, էթնիկ խմբի անդամները ինքնանույնացնում են իրենց և իրենց համայնքին: Նրա հիմնական գործառույթներից մեկը էթնիկ ինքնության ամրապնդման և բանակցությունների մեջ նրա կատարած դերն է:

• Էթնիկ սահմանների պահպանման գործում մեդիայի կատարած առաջին դերը հենց նրա ներկայությունն է: Ընդունող հասարակության մեջ այն սփյուռքի համայնքի անկախ ձայնն է, որը տարածում է նրա հետաքրքրությունների բովանդակությունը, ներկայացնում է էթնիկ համայնքը հիմնական մեդիայից տարբերվող պատմություններով, հաստատում է համայնքի կարևորությունը և ներկայացնում նրա շահերը: Երկրորդը նրա բովանդակությունն է. մշակութային և ազգային թեմաների միջոցով էթնիկ մամուլը տարածում և վերարտադրում է էթնիկ պատկանելությունն ամրապնդող էթնոմշակութային արժեքներ, ինչպես նաև ընդհանրական հայկական տեղեկատվության միջոցով նպաստում «հայաստանակենտրոն», «սփյուռքակենտրոն» և անդրազգային դիսկուրսներին:

• Տարբեր համայնքներում գործող սփյուռքի մամուլը ստեղծում է էթնիկ ինքնության բանակցությունների դիսկուրսիվ դաշտ, մասնակցում է սփյուռքյան ինքնության ձևավորմանը, տալիս է սիմվոլներ և դիրքորոշումներ՝ էթնիկ սահմանների համար, ստեղծում է երևակայական համայնքի անդամության զգացում, ինչպես նաև նպաստում է սփյուռքի անդրազգային բնույթի ամրապնդմանը:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. Բարսեղյան Ս., Հայրենիքի և սփյուռքի մասին տեղեկատվության բովանդակությունը, «Հայրենիք-սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ», խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2012, էջ 44-66:
2. Բարսեղյան Ս., Հետազոտության մեթոդի ընտրության հիմնավորումը, «Հայրենիք-սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ», խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2012, էջ 26-43:

3. Барсегян С., Обсуждение армяно-российских экономических отношений в армянской прессе: контент-анализ двух армянских периодических изданий в РА и РФ, «Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей», отв. ред. Э. Р. Григорьян, Р. С. Карапетян, Москва, ИСН, 2013, с. 125-133.
4. Բարսեղյան Ս., Էթնիկ մամուլը և սփյուռքյան ինքնության ձևավորումը, «Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնո-սոցիոլոգիական հետազոտություններ», խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2014, էջ 45-62:
5. Բարսեղյան Ս., Էթնիկ մեդիան որպես հայկական սփյուռքի ուսումնասիրման միջոց, «Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. խնդիրներ, հետազոտական փորձեր և հեռանկարներ», խմբ. Ռ.Կարապետյան և ուրիշներ, Երևան, «Գիտություն» հրատ., 2014, էջ 13-18:
6. Բարսեղյան Ս., Հայկական մամուլի դերը Սփյուռքում. Լոս Անջելեսի «Ասբարեզ», Թեհրանի «Ալիք», Մոսկվայի «Ноев Ковчег» թերթերի 2005-2010 թթ. հրապարակումների համեմատական քննություն, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2016, թ. 3 (55), էջ 190-200:
7. Барсегян С., Образ родины в СМИ армянской диаспоры (опыт контент-анализа газет США, Ирана, России), «Этносоциология вчера и сегодня», отв. ред. и сост.: Л.В. Остапенко, И.А. Субботина, Москва, Институт этнологии и антропологии РАН, 2016, с. 264-268.
8. Բարսեղյան Ս., Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերարտադրման և տարածման գործում, «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻՏՈՒՍ 2», խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2017, էջ 142-151:
9. Բարսեղյան Ս., Հայրենիքը սփյուռքի պարբերականներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, թ. 1 (649), էջ 283-287:
10. Барсегян С., Взаимоотношения родина-диаспора в прессе армянской диаспоры, «Բանբեր հայագիտության», 2017, թ. 1 (13), էջ. 185-194:

РОЛЬ ЭТНИЧЕСКОЙ ПРЕССЫ В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ (ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Резюме

Основной целью диссертации является изучение роли этнической прессы в современной Армянской диаспоре, на примере общин Москвы, Тегерана и Лос-Анджелеса. Сравнительное исследование армянских газет диаспоры предоставляет возможность выявить основные функции этнической прессы и ее роль в конструировании этнической идентичности, в самоорганизации общины, а также, установить особенности общин и общность диаспоры в целом. В качестве

объекта исследования были выбраны три армянские газеты: «Ноев Ковчег» (Москва), «Алик» (Тегеран) и «Аспарез» (Лос-Анджелес) в период с 2005 по 2010 гг.

В работе поставлены следующие исследовательские задачи:

- Дать общее и сравнительное описание содержания прессы армянской диаспоры в современный период, на примере газет трех общин;
- Раскрыть особенности функций этнической прессы в армянских общинах;
- Проанализировать характер отношений родина-диаспора в прессе;
- Рассмотреть роль армянской прессы в сохранении этнических границ и в формировании транснационального пространства.

В работе был применен междисциплинарный подход (этносоциология, социальная, культурная и медиа антропология, диаспорология, теория массовых коммуникаций, теория этничности). Прикладное этносоциологическое исследование проводилось посредством метода контент-анализа, в рамках критической традиции медиа-исследований. Статьи данных газет по армянской тематике опубликованные с 2005 по 2010 гг, анализировались по более чем двум десяткам качественных и количественных показателей, по репрезентативной выборке. Выборочная совокупность составила 312 номеров газеты. Всего было проанализировано 4635 статей.

В диссертации впервые предпринята попытка: а) изучить прессу армянской диаспоры в рамках концепции этнической медии; б) рассмотреть современную диаспоральную прессу не с точки зрения принимающей страны/общества, а с точки зрения диаспоры (сравнивая армянскую прессу в разных странах); в) провести исследование методом контент-анализа.

Результаты исследования важны как с точки зрения методологического опыта и теоретических знаний, так и с точки зрения практической значимости.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и приложений.

В первой главе рассматриваются теоретические подходы и методологические вопросы исследования этнических медиа, а также основные характеристики и функции этнических медиа, их роль в структурировании этнической идентичности.

Во второй главе обсуждаются особенности рассмотрения прессы армянской диаспоры в контексте понятия «этнической медии». Представлен общий и сравнительный анализ содержания трех исследованных газет.

Третья глава представляет основные функции этнической прессы в армянских общинах, взаимоотношения родина-диаспора в содержании прессы, а также, анализируется роль диаспоральной прессы в сохранении этнических границ.

Согласно результатам исследования, объем армянской тематики в прессе диаспоры иллюстрирует информационные потребности разных общин, показывает уровень их самоорганизации и степень влияния этнической прессы на различные процессы в диаспоре. Примечательно, что в газетах трех общин диаспоры преобладают темы, связанные с Арменией. Армянская пресса подчеркивает объединяющую функцию, освещая в основном армянскую информацию, связывающую этническую группу с родиной, при этом, способствуя сохранить этнокультурную идентичность. Однако, из сравнительного анализа

армянских общин ясно, что чем больше состоятельность общины, развитость ее институтов, тем больше пресса акцентирует свое внимание на диаспору. Несмотря на особенности и различия разных сегментов армянской диаспоры, этническая пресса формирует определенные этнокультурные общие ценности, способствует сохранению этнических границ и формированию транснационального пространства.

THE ROLE OF ETHNIC PRESS IN THE ARMENIAN DIASPORA (ETHNOSOCIOLOGICAL STUDY)

Summery

The main purpose of the dissertation is to study the role of ethnic press in the modern Armenian diaspora based on the case of communities in Moscow, Tehran and Los Angeles. A comparative study of the Armenian diaspora newspapers provides an opportunity to reveal the main functions of the ethnic press and its role both in ethnic identity construction and in communities' self-organization processes; to determine the communities' peculiarities and the universality of diaspora. Three Armenian print newspapers were chosen as the object of research: "Noev Kovcheg" (Moscow), "Alik" (Tehran) and "Asbarez" (Los Angeles), 2005-2010.

The following objectives are set according to the survey purpose:

- to give a general and comparative description of the content of the Armenian diasporic press in the modern period based on the case of three community periodicals;
- to reveal the features of the ethnic press' functions in the Armenian communities;
- to analyze the nature of homeland-diaspora relations reflected in the press;
- to examine the role of the Armenian press to the formation of diasporic and transnational spaces.

The dissertation outlines an interdisciplinary approach (ethnosociology, social, cultural and media anthropology, diaspora studies, communications theory, and ethnicity theory). Applied ethnosociological research was conducted using the method of content analysis in the framework of the critical theory of media studies. Articles published from 2005 to 2010 on Armenian subjects were analyzed by more than two dozen qualitative and quantitative indicators, according to a representative sample. The sample totaled 312 newspaper issues. A total of 4635 articles was analyzed.

An attempt has been made for the first time: a) to study the press of the Armenian diaspora within the framework of the concept of ethnic media; b) to consider the modern diaspora press not from the point of view of the host country/society, but from the point of view of the diaspora (comparing the Armenian press in different countries); c) to conduct research using the method of content analysis.

The results of the research are important both from the point of view of methodological experience and theoretical knowledge, and from the point of view of practical significance.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a list of used sources, and an appendix.

The first chapter examines theoretical approaches and methodological issues in the study of ethnic media, as well as the main characteristics and functions of ethnic media, their role in ethnic identity construction.

The second chapter discusses the specifics of consideration the press of the Armenian diaspora in the context of the concept of ethnic media. A general and comparative analysis of the contents of the three studied newspapers is presented there.

The third chapter presents the main functions of the ethnic press in the Armenian communities, the relations of the homeland-diaspora in the media content. It also analyzes the role of the diaspora press in maintaining ethnic boundaries.

According to the results of the study, the volume of Armenian topics in the diasporic press illustrates the information needs of different communities, shows the level of their self-organization and the degree of influence of the ethnic press on current community processes. It is noteworthy that topics related to Armenia predominance in the newspapers of the three diasporic communities. The Armenian press emphasizes the connective function, covering mainly Armenian information, connecting the ethnic group with the homeland, helping to preserve ethnocultural identity. However, from a comparison of the Armenian communities, it is clear that the more wealthy the community, the more institutions it has, the more the press will focus on the diaspora. Despite the peculiarities and differences of different segments of the Armenian diaspora, the ethnic press forms certain ethnocultural common values, contribute to the preservation of ethnic boundaries and the formation of transnational space.